



## ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### ԿՈԼԵԳԻԱ

---

### ՈՐՈՇՈՒՄ

28 սեպտեմբերի 2015 թվականի **թիվ 126**

քաղ. Մոսկվա

**«Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրի ձևավորում, վարում եւ օգտագործում» ընդհանուր գործընթացն արտաքին եւ փոխադարձ առևտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցներով իրագործելիս Տեղեկատվական փոխգործակցությունը կանոնակարգող տեխնոլոգիական փաստաթղթերի մասին**

Եվրասիական տնտեսական միության շրջանակներում «Տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների եւ տեղեկատվական փոխգործակցության մասին» արձանագրության 30-րդ կետին համապատասխան («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի թիվ 3 հավելված) եւ ղեկավարվելով Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի նոյեմբերի 6-ի թիվ 200 որոշմամբ՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիան **որոշեց**.

1. Հաստատել կից ներկայացվող՝

«Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրի ձևավորում, վարում եւ օգտագործում» ընդհանուր գործընթացն արտաքին եւ փոխադարձ առևտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցներով իրագործելիս տեղեկատվական փոխգործակցության կանոնները.

«Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրի ձևավորում, վարում եւ օգտագործում» ընդհանուր գործընթացն արտաքին եւ փոխադարձ առևտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցներով իրագործելիս Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների լիազորված մարմինների եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի միջև տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգը.

«Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրի ձևավորում, վարում եւ օգտագործում» ընդհանուր գործընթացն արտաքին ու փոխադարձ առևտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցներով իրագործելու համար օգտագործվող էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների ձևաչափերի ու կառուցվածքների նկարագրությունը.

«Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրի ձևավորում, վարում եւ օգտագործում» ընդհանուր գործընթացին միանալու կարգը:

2. Սահմանել, որ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի տեղեկատվական տեխնոլոգիաների հարցերով դեպարտամենտը Եվրասիական տնտեսական հանձնաժողովի մաքսային ենթակառուցվածքի դեպարտամենտի հետ համատեղ մշակում եւ հաստատում է սույն Որոշմամբ հաստատված նկարագրությամբ նախատեսված էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների կառուցվածքների տեխնիկական սխեմաները եւ ապահովում է արտաքին ու փոխադարձ առևտրի ինտեգրված տեղեկատվական համակարգում

տեղեկատվական փոխգործակցության իրագործման ժամանակ օգտագործվող էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների կառուցվածքների ռեեստրում դրանց զետեղումը:

3. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 180 օրացուցային օրը լրանալուց հետո:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի

կոլեգիայի նախագահ՝

Վ. Խրիստենկո

## ՀԱՍՏԱՏՎԱԾ ԵՆ

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի  
կոլեգիայի 2015 թվականի սեպտեմբերի 28-ի  
թիվ 126 կարգադրությամբ

### ԿԱՆՈՆՆԵՐ

**Տեղեկատվական փոխգործակցության՝ «Ժամանակավոր պահպանման  
պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրի ձևավորում,  
վարում եւ օգտագործում» ընդհանուր գործընթացն արտաքին եւ  
փոխադարձ առևտրի ինտեգրված տեղեկատվական  
համակարգի միջոցներով իրագործելիս**

#### I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն Կանոնները մշակվել են Եվրասիական տնտեսական միության  
իրավունքի մաս կազմող հետեւյալ ակտերին համապատասխան՝

«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի  
պայմանագիր.

«Ընդհանուր գործընթացներն արտաքին եւ փոխադարձ առևտրի ինտեգրված  
տեղեկատվական համակարգի միջոցներով իրագործելիս տեղեկատվական  
փոխգործակցությունը կանոնակարգող տեխնոլոգիական փաստաթղթերի մասին»  
Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2014 թվականի նոյեմբերի  
6-ի թիվ 200 որոշում.

«Եվրասիական տնտեսական միության շրջանակներում ընդհանուր  
գործընթացների ցանկի եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի  
2014 թվականի օգոստոսի 19-ի թիվ 132 որոշման մեջ փոփոխություն կատարելու

մասին» Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի ապրիլի 14-ի թիվ 29 որոշում.

«Եվրասիական տնտեսական միության շրջանակներում ընդհանուր գործընթացների վերլուծության, օպտիմալացման, ներդաշնակեցման եւ նկարագրության մեթոդիկայի մասին» Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի հունիսի 9-ի թիվ 63 որոշում:

## II. Կիրառության ոլորտը

2. Սույն Կանոնները մշակվել են «Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրի ձեւավորում, վարում եւ օգտագործում» ընդհանուր գործընթացի (այսուհետ՝ ընդհանուր գործընթաց) մասնակիցների միջեւ տեղեկատվական փոխգործակցության կարգն ու պայմանները, այդ թվում՝ այդ ընդհանուր գործընթացի շրջանակներում կատարվող ընթացակարգերի նկարագրությունը սահմանելու նպատակով:

3. Սույն Կանոնները կիրառվում են ընդհանուր գործընթացի մասնակիցների կողմից ընդհանուր գործընթացի շրջանակներում ընթացակարգերի եւ գործառնությունների կատարման կարգը հսկելիս, ինչպես նաեւ ընդհանուր գործընթացի իրագործումն ապահովող տեղեկատվական համակարգերի բաղադրիչները նախագծելիս, մշակելիս եւ լրամշակելիս:

## III. Հիմնական հասկացություններ

4. Սույն Կանոնների նպատակներով գործածվում են հասկացություններ, որոնք ունեն հետեւյալ իմաստը՝

«ավտորիզացում»՝ ընդհանուր գործընթացի կոնկրետ մասնակցին որոշակի գործողությունների կատարման իրավունքների տրամադրում.

«ընդհանուր գործընթացի ընթացակարգերի խումբ»՝ ընդհանուր գործընթացի ընթացակարգեր, որոնք միավորված են ընդհանուր գործընթացի առանձնահատկությամբ պայմանավորված որոշակի հատկանիշով.

«ընդհանուր գործընթացի տեղեկատվական օբյեկտ»՝ հանգամանքներ, գործողություններ կամ իրադարձություններ, որոնց ի հայտ գալու, փոփոխության կամ դադարեցման (ավարտման) մասին տեղեկությունները փոխանցվում են ընդհանուր գործընթացի ընթացակարգերի կատարման ընթացքում ընդհանուր գործընթացի մասնակիցների միջև տեղեկատվական փոխգործակցության գործընթացում.

«կատարող»՝ ընդհանուր գործընթացի մասնակից, որը պատասխանատու է գործառնությունների կատարման համար.

«պատմական տվյալներ»՝ տեղեկատվություն, որը պահվում է ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում՝ դրա ձեւավորման պահից, եւ որի մեջ փոփոխությունների կատարում չի նախատեսվում.

«ազգային ռեեստր»՝ ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստր, որի ձեւավորումը եւ վարումն իրականացվում են Եվրասիական տնտեսական միության անդամ պետության մաքսային մարմնի կողմից.

«ընդհանուր գործընթացի գործառնություն»՝ ընդհանուր գործընթացի կոնկրետ մասնակցի գործառնությունների, խնդիրների շրջանակին պատկանող հերթական, կրկնվող գործողություն.

«ընդհանուր գործընթացի ընթացակարգ»՝ ընդհանուր գործընթացի մասնակիցների կողմից ընդհանուր գործընթացի շրջանակներում կատարվող եւ կոնկրետ խնդրի լուծմանն ուղղված՝ միմյանց հետ կապված գործառնությունների ամբողջություն.

«ընդհանուր գործընթացի մասնակից»՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողով, Եվրասիական տնտեսական միության անդամ պետության լիազորված մարմին, ինչպես նաեւ իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որը շահագրգռված է ընդհանուր գործընթացի արդյունքներով, եւ որի մասնակցությունը ընդհանուր գործընթացում կանոնակարգվում է Եվրասիական

տնտեսական միության իրավունքի մաս կազմող միջազգային պայմանագրերով եւ ակտերով:

#### IV. Հիմնական տեղեկություններ ընդհանուր գործընթացի վերաբերյալ

5. Ընդհանուր գործընթացի լրիվ անվանումը՝ «Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրի ձեւավորում, վարում եւ օգտագործում».

6. Ընդհանուր գործընթացի ծածկագրային նշագիրը՝ P.CC.08, տարբերակ՝ 1.1.1.

#### 1. Ընդհանուր գործընթացի նպատակը եւ խնդիրները

7. Ընդհանուր գործընթացի նպատակը ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրից տեղեկությունների կազմման եւ ընդհանուր գործընթացի մասնակիցներին դրանք ներկայացնելու մեխանիզմների կատարելագործումն է:

ստացումը Եվրասիական տնտեսական միության անդամ պետո

8. Ընդհանուր գործընթացի նպատակին հասնելու համար անհրաժեշտ է լուծել հետեւյալ խնդիրները.

ա) ապահովել Եվրասիական տնտեսական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) կողմից ազգային ռեեստրում իրավաբանական անձանց ներառելու, նրանց այդ ռեեստրից հանելու, որպես ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողներ գործունեությունը կասեցնելու (վերսկսելու), ինչպես նաեւ՝ ազգային ռեեստրում իրավաբանական անձանց մասին տեղեկությունները փոփոխելու վերաբերյալ տեղեկատվության ստացումը Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների լիազորված մարմիններից (այսուհետ համապատասխանաբար՝ Միություն, անդամ պետություններ).

բ) ապահովել ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրի ավտոմատացված ձևավորումը՝ Հանձնաժողովի կողմից ստացված տեղեկատվության հիման վրա, եւ դրա հրապարակումը Միության տեղեկատվական պորտալում:

գ) իրականացնել ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում ներառված իրավաբանական անձանց մասին տեղեկությունները ավտոմատացված ներկայացնելու մեխանիզմը արտաքին ու փոխադարձ առևտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցով՝ անդամ պետությունների լիազորված մարմինների տեղեկատվական համակարգերում օգտագործելու նպատակներով:

դ) ապահովել ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում ներառված իրավաբանական անձանց մասին տեղեկությունները ներկայացնելն արտաքին տեղեկատվական համակարգերի հարցման հիման վրա՝ օգտագործելով Միության տեղեկատվական պորտալում զետեղված ծառայությունները:

## 2. Ընդհանուր գործընթացի մասնակիցները

9. Ընդհանուր գործընթացի մասնակիցների ցանկը բերված է 1-ին աղյուսակում:

Աղյուսակ 1

### Ընդհանուր գործընթացի մասնակիցների ցանկ

Ծածկագրային նշագիրը	Անվանումը	Նկարագրությունը
1	2	3
P.ACT.001	Հանձնաժողով	Հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանում, որը



		<p>պատասխանատու է ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրի ձեւավորումը, վարումը եւ օգտագործումն ապահովելու համար</p>
P.CC.08.ACT.001	անդամ պետության լիազորված մարմին	<p>անդամ պետության գործադիր իշխանության մարմին, որը լիազորված է ազգային ռեեստրը վարելու եւ ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրի ձեւավորման նպատակով այն Հանձնաժողով ներկայացնելու, ինչպես նաեւ մաքսային գործառնություններ եւ մաքսային հսկողություն իրականացնելու ժամանակ ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրից տեղեկություններն օգտագործելու համար</p>
P.CC.08.ACT.002	շահագրգիռ անձ	<p>արտաքին տնտեսական գործունեության մասնակից, իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որն իր գործունեության մեջ տեղեկություններ է օգտագործում ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրից</p>

### 3. Ընդհանուր գործընթացի կառուցվածքը

10. Ընդհանուր գործընթացն ըստ իրենց նշանակության խմբավորված ընթացակարգերի ամբողջություն է՝

ա) ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրի ձեւավորման եւ վարման ընթացակարգեր,

բ) ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում պարունակվող տեղեկություններն անդամ պետությունների լիազորված մարմիններ ներկայացնելու ընթացակարգեր.

գ) ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում պարունակվող տեղեկությունները շահագրգիռ անձանց ներկայացնելու ընթացակարգեր.

11. Ընդհանուր գործընթացի ընթացակարգերը կատարելիս իրականացվում են անդամ պետությունների լիազորված մարմիններից ստացված՝ ազգային ռեեստրներից տեղեկությունների հիման վրա ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրի ձևավորումը, ինչպես նաև անդամ պետությունների լիազորված մարմիններ եւ շահագրգիռ անձանց՝ ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում ներառված իրավաբանական անձանց մասին տեղեկությունները ներկայացնելը:

Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրը ձևավորելիս կատարվում են ընդհանուր գործընթացի՝ ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրի ձևավորման եւ վարման ընթացակարգերի խմբում ներառված հետևյալ ընթացակարգերը՝

ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում տեղեկությունների ներառում,

ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում պարունակվող տեղեկությունների փոփոխում,

ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրից տեղեկությունների հանում:

Անդամ պետությունների լիազորված մարմիններին տեղեկատվություն ներկայացնելիս կատարվում են ընդհանուր գործընթացի՝ ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում

պարունակվող տեղեկություններն անդամ պետությունների լիազորված մարմիններ ներկայացնելու ընթացակարգերի խմբում ներառված հետևյալ ընթացակարգերը՝


Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրի թարմացման ամսաթվի եւ ժամի մասին տեղեկատվության ստացում,

Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրից տեղեկությունների ստացում,

Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում կատարված փոփոխությունների մասին տեղեկատվության ստացում:

Շահագրգիռ անձանց տեղեկատվություն ներկայացնելիս կատարվում է ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում պարունակվող տեղեկությունները շահագրգիռ անձանց ներկայացնելու ընթացակարգերի խմբում ներառված՝ «Միության տեղեկատվական պորտալի միջոցով ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրից տեղեկությունների ստացում» ընթացակարգը:

12. Ընդհանուր գործընթացի կառուցվածքի՝ բերված նկարագրությունը ներկայացված է 1-ին նկարում:



Նկ. 1. Ընդհանուր գործընթացի կառուցվածքը

13. Ընդհանուր գործընթացի՝ ըստ իր նշանակության խմբավորված ընթացակարգերի կատարման կարգը, այդ թվում՝ գործառնությունների մանրամասն նկարագրությունը, բերված է սույն Կանոնների VIII բաժնում:

14. Ընթացակարգերի յուրաքանչյուր խմբի համար բերվում է ընդհանուր գործընթացի ընթացակարգերի միջեւ առկա կապերը եւ դրանց կատարման կարգն

արտացոլող ընդհանուր սխեման: Ընթացակարգերի ընդհանուր սխեման կառուցված է UML գրաֆիկական նոտացիայի (մոդելավորման միասնականացված լեզու՝ Unified Modeling Language) օգտագործմամբ եւ ապահովված է տեքստային նկարագրությամբ:

4. Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրի ձեւավորման եւ վարման ընթացակարգերի խումբը

15. Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրի ձեւավորման եւ վարման ընթացակարգերի կատարումն սկսվում է ազգային ռեեստրում պարունակվող տեղեկությունները փոփոխելու (ավելացնելու, հանելու) մասին տեղեկատվությունն անդամ պետության լիազորված մարմնի կողմից ստանալու պահից:

Անդամ պետության լիազորված մարմնում ազգային ռեեստրը վարելիս այդ պետության օրենսդրության պահանջներին համապատասխան ապահովվում է իրավաբանական անձին ազգային ռեեստրում ներառելու մասին փաստաթղթերի գրանցման համարների եզակիությունը:

Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրի ձեւավորման եւ վարման ընթացակարգերը կատարելիս անդամ պետության լիազորված մարմինը ազգային ռեեստրում փոփոխություններ կատարելու պահին ձեւավորում եւ Հանձնաժողով է ներկայացնում այդ փոփոխությունների մասին տեղեկությունները: Նշված տեղեկությունները ներկայացնելն իրականացվում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի սեպտեմբերի 28-ի թիվ 126 որոշմամբ հաստատված՝ «Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրի ձեւավորում, վարում եւ օգտագործում» ընդհանուր գործընթացն արտաքին եւ փոխադարձ առեստրի ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցներով իրագործելիս Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների լիազորված մարմինների եւ Եվրասիական տնտեսական

հանձնաժողովի միջև տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգին (այսուհետ՝ Տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգ) համապատասխան: Ներկայացվող տեղեկությունների ձևաչափը եւ կառուցվածքը պետք է համապատասխանեն Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2015 թվականի սեպտեմբերի 28–ի թիվ 126 որոշմամբ հաստատված՝ «Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրի ձևավորում, վարում եւ օգտագործում» ընդհանուր գործընթացն արտաքին եւ փոխադարձ առևտրի ինտեգրված տեղեկատվական համակարգի միջոցներով իրագործելու համար օգտագործվող Էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների ձևաչափերի ու կառուցվածքների նկարագրությանը (այսուհետ՝ Էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների ձևաչափերի ու կառուցվածքների նկարագրություն):

Իրավաբանական անձին ազգային ռեեստրում ներառելիս կատարվում է «Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում տեղեկությունների ներառում» ընթացակարգը (P.CC.08.PRC.001):


Ազգային ռեեստրում կատարված փոփոխությունների մասին տեղեկությունները փոխանցելիս (իրավաբանական անձի մասին այն տեղեկությունների փոփոխման դեպքում, որոնց մասին հայտարարվել է ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում նրան ներառելիս) կատարվում է «Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում պարունակվող տեղեկությունների փոփոխում» ընթացակարգը (P.CC.08.PRC.002):

Իրավաբանական անձին ազգային ռեեստրից հանելու մասին տեղեկությունները փոխանցելիս կատարվում է «Ժամանակավոր պահպանման ընդհանուր ռեեստրից տեղեկությունների հանում» ընթացակարգը (P.CC.08.PRC.003):

Այն դեպքում, երբ ազգային ռեեստրում փոփոխություններ կատարելիս փոխվում է ազգային ռեեստրում իրավաբանական անձի ներառումը հաստատող

փաստաթղթի գրանցման համարը, տեղեկությունները ներկայացվում են 2 ընթացակարգերի կիրառմամբ՝ «Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրից տեղեկությունների հանում» (P.CC.08.PRC.003) եւ «Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում տեղեկությունների ներառում» (P.CC.08.PRC.001):

16. Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրի ձեւավորման եւ վարման ընթացակարգերի խմբի բերված նկարագրությունը ներկայացված է 2-րդ նկարում:



Նկ. 2. Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրի ձեւավորման եւ վարման ընթացակարգերի խմբի կատարման ընդհանուր սխեմա

17. Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրի ձեւավորման եւ վարման ընթացակարգերի խմբի մեջ մտնող ընդհանուր գործընթացի ընթացակարգերի ցանկը ներկայացված է 2-րդ աղյուսակում:

Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների  
ընդհանուր ռեեստրի ձեւավորման եւ վարման ընթացակարգերի խմբի  
մեջ մտնող՝ ընդհանուր գործընթացի ընթացակարգերի ցանկ

Ծածկագրային նշագիրը	Անվանումը	Նկարագրությունը
1	2	3
P.CC.08.PRC.001	Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում տեղեկությունների ներառում	ընթացակարգի կատարման ընթացքում անդամ պետության լիազորված մարմնի կողմից իրականացվում են Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում ներառելու համար տեղեկությունների ձեւավորում եւ ներկայացում Հանձնաժողով
P.CC.08.PRC.002	Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում պարունակվող տեղեկությունների փոփոխում	ընթացակարգի կատարման ընթացքում անդամ պետության լիազորված մարմնի կողմից իրականացվում են Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում փոփոխություններ կատարելու համար տեղեկությունների ձեւավորում եւ ներկայացում Հանձնաժողով
P.CC.08.PRC.003	Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների	ընթացակարգի կատարման ընթացքում անդամ պետության լիազորված



	<p>ընդհանուր ռեեստրից տեղեկությունների հանում</p>	<p>մարմնի կողմից իրականացվում են ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրից իրավաբանական անձին հանելու մասին տեղեկությունների ձեռավորում եւ ներկայացում Հանձնաժողով</p>
--	---	--

5. Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում պարունակվող տեղեկություններն անդամ պետությունների լիազորված մարմիններ ներկայացնելու ընթացակարգերի խումբ

18. Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում պարունակվող տեղեկություններն անդամ պետությունների լիազորված մարմիններ ներկայացնելու ընթացակարգերը կատարվում են անդամ պետությունների լիազորված մարմինների տեղեկատվական համակարգերից համապատասխան հարցումն ստանալու դեպքում:

Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում պարունակվող տեղեկություններն անդամ պետությունների լիազորված մարմիններ ներկայացնելու ընթացակարգերի կատարման շրջանակներում մշակվում են անդամ պետությունների լիազորված մարմինների տեղեկատվական համակարգերից ստացվող հարցումների հետևյալ տեսակները`

Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրի թարմացման ամսաթվի եւ ժամի մասին տեղեկատվության հարցում.

Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրից տեղեկությունների հարցում.

Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում կատարված փոփոխությունների մասին տեղեկատվության հարցում:


Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրի թարմացման ամսաթվի եւ ժամի մասին տեղեկատվության հարցումը կատարվում է անդամ պետության լիազորված մարմնի կողմից՝ անդամ պետության լիազորված մարմնի տեղեկատվական համակարգում պահվող՝ ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում ներառված ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների մասին տեղեկությունները ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում պարունակվող եւ Հանձնաժողովում պահվող տեղեկությունների հետ սինխրոնացնելու անհրաժեշտությունը գնահատելու նպատակով: Հարցումն իրականացնելիս կատարվում է «Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրի թարմացման ամսաթվի եւ ժամի մասին տեղեկատվության ստացում» ընթացակարգը (P.CC.08.PRC.004):

Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրից տեղեկությունների հարցումը կատարվում է ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում ներառված բոլոր իրավաբանական անձանց մասին Հանձնաժողովում պահվող տեղեկություններն անդամ պետության լիազորված մարմնի կողմից ստանալու նպատակով: Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում պարունակվող տեղեկությունները հարցվում են կամ ամբողջ ծավալով (հաշվի առնելով վիճակագրական տվյալները), կամ որոշակի ամսաթվի դրությամբ: Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրից տեղեկությունների՝ ամբողջ ծավալով հարցումն օգտագործվում է ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների մասին տեղեկությունների՝ տեղեկատվական համակարգում սկզբնական բեռնման ժամանակ, օրինակ՝ ընդհանուր գործընթացը մեկնարկելիս, ընդհանուր գործընթացի նոր մասնակցին դրանում ներառելիս, խափանումից հետո տեղեկատվությունը վերականգնելիս: Հարցումն իրականացնելիս

կատարվում է «Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրից տեղեկությունների ստացում» ընթացակարգը (P.CC.08.PRC.005):

Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում կատարված փոփոխությունների մասին տեղեկատվության հարցման դեպքում ներկայացվում են այն տեղեկությունները, որոնք ավելացվել են ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում կամ որոնցում կատարվել են փոփոխություններ՝ սկսած հարցման մեջ նշված պահից մինչև այդ հարցումը կատարելու պահը: Հարցումն իրականացնելիս կատարվում է «Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում կատարված փոփոխությունների մասին տեղեկատվության ստացում» ընթացակարգը (P.CC.08.PRC.006):

19. Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում պարունակվող տեղեկություններն անդամ պետությունների լիազորված մարմիններ ներկայացնելու ընթացակարգերի խմբերի բերված նկարագրությունը ներկայացված է 3-րդ նկարում:



Նկ. 3. Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում պարունակվող տեղեկություններն անդամ պետությունների լիազորված մարմիններ ներկայացնելու ընթացակարգերի խմբի կատարման ընդհանուր սխեմա

20. Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում պարունակվող տեղեկություններն անդամ պետությունների լիազորված մարմիններ ներկայացնելու ընթացակարգերի խմբում ներառված ընդհանուր գործընթացի ընթացակարգերի ցանկը բերված է 3-րդ աղյուսակում:

Աղյուսակ 3

Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում պարունակվող տեղեկություններն անդամ պետությունների լիազորված մարմիններ ներկայացնելու ընթացակարգերի խմբում ներառված ընդհանուր գործընթացի ընթացակարգերի ցանկ

Ծածկագրային նշագիրը	Անվանումը	Նկարագրությունը
1	2	3
P.CC.08.PRC.004	Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրի թարմացման ամսաթվի եւ ժամի մասին տեղեկատվության ստացում	ընթացակարգը նախատեսված է անդամ պետության լիազորված մարմնի տեղեկատվական համակարգում պահվող՝ ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում ներառված ժամանակավոր պահպանման

		<p>պահեստների տիրապետողների մասին տեղեկությունները ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում պարունակվող և Հանձնաժողովում պահվող տեղեկությունների հետ սինխրոնացնելու անհրաժեշտությունը գնահատելու համար</p>
P.CC.08.PRC.005	<p>ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրից տեղեկությունների ստացում</p>	<p>ընթացակարգը նախատեսված է ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում պարունակվող տեղեկությունների ստացման համար</p>
P.CC.08.PRC.006	<p>ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում կատարված փոփոխությունների մասին տեղեկատվության ստացում</p>	<p>ընթացակարգը նախատեսված է անդամ պետության լիազորված մարմնի տեղեկատվական համակարգում պահվող ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում ներառված ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների մասին տեղեկությունները ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում պարունակվող տեղեկությունների հետ սինխրոնացնելու համար</p>


6. Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում պարունակվող տեղեկությունները շահագրգիռ անձանց ներկայացնելու ընթացակարգերի խումբ

21. Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում պարունակվող տեղեկությունները շահագրգիռ անձանց ներկայացնելու ընթացակարգերը կատարվում են Միության տեղեկատվական պորտալի օգտագործմամբ:

Միության տեղեկատվական պորտալի միջոցով տեղեկություններ ներկայացնելիս օգտագործվում է այդ պորտալի վեբ-միջերեսը կամ այդ պորտալում զետեղված ծառայությունները: Վեբ-միջերեսն օգտագործելիս օգտատերը բրաուզերի (զննիչի) պատուհանում սահմանում է ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում պարունակվող տեղեկությունները որոնելու եւ (կամ) պահպանելու պարամետրերը, աշխատում բրաուզերի (զննիչի) պատուհանում ներկայացված՝ ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրից տեղեկատվության հետ:

Միության տեղեկատվական պորտալում զետեղված ծառայություններն օգտագործելիս փոխգործակցությունն իրականացվում է շահագրգիռ անձի տեղեկատվական համակարգի եւ Միության տեղեկատվական պորտալի միջեւ:

22. Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում պարունակվող տեղեկությունները շահագրգիռ անձանց ներկայացնելու ընթացակարգերի խմբի բերված նկարագրությունը ներկայացված է 4-րդ նկարում:



Նկ. 4. Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում պարունակվող տեղեկությունները շահագրգիռ անձանց ներկայացնելու ընթացակարգերի խմբի կատարման ընդհանուր սխեմա

23. Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում պարունակվող տեղեկությունները շահագրգիռ անձանց ներկայացնելու ընթացակարգերի խմբում ներառված ընդհանուր գործընթացի ընթացակարգերի ցանկը բերված է 4-րդ աղյուսակում:

Աղյուսակ 4

Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում պարունակվող տեղեկությունները շահագրգիռ անձանց ներկայացնելու ընթացակարգերի խմբում ներառված ընդհանուր գործընթացի ընթացակարգերի ցանկ

Ծածկագրային նշագիրը	Անվանումը	Նկարագրությունը
1	2	3
P.CC.08.PRC.007	Միության տեղեկատվական պորտալի միջոցով	ընթացակարգը նախատեսված է ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների

	Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրից տեղեկությունների ստացում	ընդհանուր ռեեստրում պարունակվող տեղեկությունները Միության տեղեկատվական պորտալի միջոցով ստանալու համար՝ օգտագործելով այդ պորտալի վեբ-միջերեսը կամ այդ պորտալում գետեղված ծառայությունները
--	--	--

V. Ընդհանուր գործընթացի տեղեկատվական օբյեկտները

24. Տեղեկատվական այն օբյեկտների ցանկը, որոնց վերաբերյալ կամ որոնցից տեղեկությունները փոխանցվում են ընդհանուր գործընթացի մասնակիցների միջև տեղեկատվական փոխգործակցության ընթացքում, ներկայացված է 5-րդ աղյուսակում:

Աղյուսակ 5

Տեղեկատվական օբյեկտների ցանկ

Ծածկագրային նշագիրը	Անվանումը	Նկարագրությունը
1	2	3
P.CC.08.BEN.001	Ժամանակավոր պահպանման պահեստի տիրապետողի մասին տեղեկություններ	ազգային ռեեստրից տեղեկությունները, որոնք անդամ պետության լիազորված մարմնի կողմից ներկայացվել են Հանձնաժողով
P.CC.08.BEN002	Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրի վիճակի մասին տեղեկատվություն	Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրի վիճակի (վերջին թարմացման ամսաթվի եւ ժամի) մասին տեղեկատվություն
P.CC.08.BEN.003	Ժամանակավոր պահպանման պահեստների	Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում ներառված



	տիրապետողների ընդհանուր ռեեստր	իրավաբանական անձանց մասին տեղեկություններ
--	-----------------------------------	--

VI. Ընդհանուր գործընթացի մասնակիցների պատասխանատվությունը

25. Տեղեկատվական փոխգործակցությանը մասնակցող Հանձնաժողովի աշխատակիցները եւ պաշտոնատար անձինք տեղեկությունների ամբողջական ու ժամանակին փոխանցումն ապահովելուն ուղղված պահանջները չկատարելու համար կարգապահական պատասխանատվության են ենթարկվում «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին, Միության իրավունքի մաս կազմող այլ միջազգային պայմանագրերին եւ ակտերին համապատասխան, իսկ անդամ պետության լիազորված մարմինների պաշտոնատար անձինք եւ աշխատակիցները՝ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան:

VII. Ընդհանուր գործընթացի տեղեկատուներ եւ դասակարգիչներ

26. Ընդհանուր գործընթացի տեղեկատուների եւ դասակարգիչների ցանկը բերված է 6-րդ աղյուսակում:

Աղյուսակ 6

Ընդհանուր գործընթացի տեղեկատուների եւ դասակարգիչների ցանկ

Ծածկագրային նշագիրը	Անվանումը	Տեսակը	Նկարագրությունը
1	2	3	4
P.CLS.001	աշխարհի երկրների դասակարգիչ	միջազգային դասակարգիչ	պարունակում է երկրների

Ծածկագրային նշագիրը	Անվանումը	Տեսակը	Նկարագրությունը
1	2	3	4
			անվանումները եւ դրան համապատասխան ծածկագրերը (կիրառվում է Մաքսային հանձնաժողովի 2010 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 378 որոշման համաձայն)
P.CLS.015	տրանսպորտի տեսակների եւ ապրանքների տրանսպորտային փոխադրման դասակարգիչ	միջազգային դասակարգիչ	պարունակում է տրանսպորտային միջոցների տեսակների եւ ապրանքների տրանսպորտային փոխադրման ցանկը եւ դրանց համապատասխանող ծածկագրերը (կիրառվում է Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 378 որոշմանը համապատասխան)
P.CLS.025	անդամ պետությունների մաքսային մարմինների դասակարգիչ	տարածաշրջանային դասակարգիչ	պարունակում է անդամ պետությունների մաքսային մարմինների անվանումների ցանկը եւ դրանց համապատասխան ծածկագրերը


## VIII. Ընդհանուր գործընթացի ընթացակարգերը

### 1. Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրի ձևավորման եւ վարման ընթացակարգեր

«Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում տեղեկությունների ներառում» ընթացակարգ

(P.CC.08.PRC.001)

27. «Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում տեղեկությունների ներառում» ընթացակարգի (P.LS.08.PRC.001) կատարման սխեման ներկայացված է 5-րդ նկարում:



Նկ. 5. «Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում տեղեկությունների ներառում» ընթացակարգի կատարման սխեմա (P.CC.08.PRC.001)

28. «Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում տեղեկությունների ներառում» ընթացակարգը (P.CC.08.PRC.001) կատարվում է անդամ պետության լիազորված մարմնի կողմից ազգային ռեեստրում տեղեկությունները ներառելիս:

29. Առաջին հերթին կատարվում է «Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում ներառելու համար տեղեկությունների ներկայացում» գործառնությունը (P.CC.08.OPR.001), որի կատարման արդյունքներով անդամ պետության լիազորված մարմնի կողմից ձևակերպվում է Հանձնաժողով են ներկայացվում ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում ներառվող իրավաբանական անձի մասին տեղեկությունները:

30. Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում ներառվող իրավաբանական անձի մասին տեղեկությունները Հանձնաժողովի կողմից ստանալիս կատարվում է «Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում ներառվող իրավաբանական անձի մասին տեղեկությունների ընդունում եւ մշակում» գործառնությունը (P.CC.08.OPR.002), որի կատարման արդյունքներով իրավաբանական անձի մասին տեղեկությունները ներառվում են ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում: Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում իրավաբանական անձին ներառելու մասին ծանուցումը փոխանցվում է անդամ պետության լիազորված մարմին:

31. Անդամ պետության լիազորված մարմին ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում իրավաբանական անձին ներառելու մասին ծանուցում ստանալիս կատարվում է «Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում տեղեկությունները ներառելու մասին ծանուցման ստացում» գործառնությունը (P.CC.08.OPR.003), որի կատարման ընթացքում իրականացվում է նշված ծանուցման ընդունումն ու մշակումը:

32. «Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում ներառվող իրավաբանական անձի մասին տեղեկությունների ընդունում ու մշակում» գործառնությունը (P.CC.08.OPR.002) կատարելու դեպքում կատարվում է «Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրի հրապարակում» գործառնությունը (P.CC.08.OPR.004), որի կատարման արդյունքներով ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների թարմացված ընդհանուր ռեեստրը հրապարակվում է Միության տեղեկատվական պորտալում:

33. «Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում տեղեկությունների ներառում» ընթացակարգի (P.CC.08.PRC.001) կատարման արդյունքներն են՝ ազգային ռեեստրում պարունակվող տեղեկությունների մշակումը Հանձնաժողովում, ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում իրավաբանական անձի ներառումը եւ Միության տեղեկատվական պորտալում ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրի հրապարակումը:

34. «Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում տեղեկությունների ներառում» ընթացակարգի (P.CC.08.PRC.001) շրջանակներում կատարվող՝ ընդհանուր գործընթացի գործառնությունների ցանկը բերված է 7-րդ աղյուսակում:

Աղյուսակ 7

«Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում տեղեկությունների ներառում» ընթացակարգի (P.CC.08.PRC.001) շրջանակներում կատարվող՝ ընդհանուր գործընթացի գործառնությունների ցանկ

Ծածկագրային նշագիրը	Անվանումը	Նկարագրությունը
1	2	3
P.CC.08.OPR.001	Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում ներառելու համար տեղեկությունների ներկայացում	բերված է սույն Կանոնների 8-րդ աղյուսակում
P.CC.08.OPR.002	Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում ներառվող իրավաբանական անձի մասին տեղեկությունների ընդունում եւ մշակում	բերված է սույն Կանոնների 9-րդ աղյուսակում
P.CC.08.OPR.003	Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում տեղեկությունները ներառելու մասին ծանուցման ստացումը	բերված է սույն Կանոնների 10-րդ աղյուսակում
P.CC.08.OPR.004	Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրի հրապարակումը	բերված է սույն Կանոնների 11-րդ աղյուսակում

Աղյուսակ 8

«Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում ներառելու համար տեղեկությունների ներկայացում» գործառնության (P.CC.08.OPR.001) նկարագրություն

Թիվ ը/կ	Տարրի նշագիրը	Նկարագրությունը
1	2	3
1	Ծածկագրային նշագիրը	P.CC.08.OPR.001

2	Գործառնության անվանումը	Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում ներառելու համար տեղեկությունների ներկայացում
3	Կատարողը	անդամ պետության լիազորված մարմին
4	Կատարման պայմանները	կատարվում է ազգային ռեեստրում տեղեկությունները ներառելիս
5	Սահմանափակումները	ներկայացված տեղեկությունների ձեռագրային ու կառուցվածքը պետք է համապատասխանեն Էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների ձեռագրային եւ կառուցվածքների նկարագրությանը
6	Գործառնության նկարագրությունը	կատարողը կազմում է Հանձնաժողովին փոխանցելու համար նախատեսված ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում ներառվող իրավաբանական անձի մասին տեղեկություններ պարունակող հաղորդագրություն՝ Տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգին համապատասխան
7	Արդյունքները	Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում ներառելու համար տեղեկությունները փոխանցվել են Հանձնաժողով

Աղյուսակ 28

«Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում ներառվող իրավաբանական անձի մասին տեղեկությունների ընդունում եւ մշակում» ընթացակարգի նկարագրություն (P.CC.08.OPR.002)

Թիվ ը/կ	Տարրի նշագիրը	Նկարագրությունը
1	2	3
1	Ծածկագրային նշագիրը	P.CC.08.OPR.002
2	Գործառնության անվանումը	Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում ներառվող իրավաբանական անձի մասին տեղեկությունների ընդունում եւ մշակում
3	Կատարողը	Հանձնաժողով
4	Կատարման պայմանները	կատարվում է ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում ներառելու համար տեղեկությունները կատարողի կողմից ստանալիս («Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում ներառելու համար տեղեկությունների ներկայացում» գործառնություն (P.CC.08.OPR.001))
5	Սահմանափակումները	ներկայացվող տեղեկությունների ձեւաչափն ու կառուցվածքը պետք է համապատասխանեն Էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների ձեւաչափերի ու կառուցվածքների նկարագրությանը: Պահանջվում է ավտորիզացում, տեղեկությունները ներկայացվում են միայն անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից: Հաղորդագրությունը եւ Էլեկտրոնային փաստաթուղթը (տեղեկությունները) պետք է համապատասխանեն Էլեկտրոնային փաստաթղթի (տեղեկությունների) վավերապայմանների լրացման նկատմամբ ներկայացվող Տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգով նախատեսված պահանջներին
6	Գործառնության նկարագրությունը	կատարողն իրավաբանական անձի մասին տեղեկությունները ներառում է ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում, կազմում եւ անդամ պետության լիազորված մարմին է ուղարկում իրավաբանական անձին ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում ներառելու մասին



Թիվ ը/կ	Տարրի նշագիրը	Նկարագրությունը
1	2	3
		ծանուցումը
7	Արդյունքները	Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում ներառվող իրավաբանական անձի մասին տեղեկությունները մշակվել են, իրավաբանական անձին ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում ներառելու մասին ծանուցումն ուղարկվել է անդամ պետության լիազորված մարմին

Աղյուսակ 30

«Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում տեղեկությունները ներառելու մասին ծանուցման ստացում» գործառնության նկարագրություն  
(P.CC.08.OPR.003)

Թիվ ը/կ	Տարրի նշագիրը	Նկարագրությունը
1	2	3
1	Ծածկագրային նշագիրը	P.CC.08.OPR.003
2	Գործառնության անվանումը	Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում տեղեկությունները ներառելու մասին ծանուցման ստացում
3	Կատարողը	անդամ պետության լիազորված մարմին
4	Կատարման պայմանները	կատարվում է ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում իրավաբանական անձին ներառելու մասին կատարողի կողմից ծանուցում ստանալիս

Թիվ ը/կ	Տարրի նշագիրը	Նկարագրությունը
1	2	3
		(«Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում ներառվող իրավաբանական անձի մասին տեղեկությունների ընդունում եւ մշակում» գործառնություն (P.CC.08.OPR.002))
5	Սահմանափակումները	ծանուցման ձեւաչափն ու կառուցվածքը պետք է համապատասխանեն Էլեկտրոնային փաստաթղթերի եւ տեղեկությունների ձեւաչափերի ու կառուցվածքների նկարագրությանը
6	Գործառնության նկարագրությունը	կատարողն իրականացնում է ծանուցման ընդունում՝ Տեղեկատվական փոխգործակցության կանոնակարգին համապատասխան
7	Արդյունքները	տեղեկությունների մշակման արդյունքների մասին ծանուցումը մշակվել է

Աղյուսակ 11


«Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրի հրապարակում» գործառնության նկարագրությունը (P.CC.08.OPR.004)

Թիվ ը/կ	Տարրի նշագիրը	Նկարագրությունը
1	2	3
1	Ծածկագրային նշագիրը	P.CC.08.OPR.004
2	Գործառնության անվանումը	Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրի հրապարակում
3	Կատարողը	Հանձնաժողով

4	Կատարման պայմանները	կատարվում է ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում տեղեկություններ ներառելիս («Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում ներառվող իրավաբանական անձի մասին տեղեկությունների ընդունում եւ մշակում» գործառնություն (P.CC.08.OPЯ.002))
5	Սահմանափակումները	-
6	Գործառնության նկարագրությունը	կատարողն ապահովում է Միության տեղեկատվական պորտալում ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրի հրապարակումը
7	Արդյունքները	ներառված տեղեկությունները պարունակող ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրը հրապարակվել է Միության տեղեկատվական պորտալում

«Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում պարունակվող տեղեկությունների փոփոխում»  
 ընթացակարգ (P.CC.08.PRC.002)

35. «Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում պարունակվող տեղեկությունների փոփոխում» ընթացակարգի (P.CC.08.PRC.002) կատարման սխեման ներկայացված է 6-րդ նկարում:



Նկ. 6. «Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում պարունակվող տեղեկությունների փոփոխում» ընթացակարգի (P.CC.08.PRC.002) կատարման սխեման

36. «Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում պարունակվող տեղեկությունների փոփոխում» ընթացակարգը (P.CC.08.PRC.002) կատարվում է անդամ պետության լիազորված մարմնի կողմից ազգային ռեեստրում փոփոխություններ կատարելիս:

37. Առաջին հերթին կատարվում է «Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում փոփոխություններ կատարելու համար տեղեկությունների ներկայացում» գործառնությունը (P.CC.08.OPR.005), որի կատարման արդյունքներով անդամ պետության լիազորված մարմնի կողմից ձևակերպվում է Հանձնաժողով են ներկայացվում ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում փոփոխություններ կատարելու համար տեղեկությունները:

38. Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում փոփոխություններ կատարելու համար տեղեկությունները Հանձնաժողովի կողմից ստանալիս կատարվում է «Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում փոփոխություններ կատարելու համար տեղեկությունների ընդունում ու մշակում» գործառնությունը (P.CC.08.OPR.006), որի կատարման արդյունքներով ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր թարմացվում են համապատասխան տեղեկությունները: Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում փոփոխություններ կատարելու մասին ծանուցումը փոխանցվում է անդամ պետության լիազորված մարմին:

39. Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում փոփոխություններ կատարելու մասին ծանուցումն անդամ պետության լիազորված մարմնի կողմից ստանալիս կատարվում է «Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում փոփոխություններ կատարելու մասին ծանուցման ստացում» գործառնությունը (P.CC.08.OPR.007), որի կատարման ընթացքում իրականացվում են նշված ծանուցման ընդունումն ու մշակումը:

40. «Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում փոփոխություններ կատարելու համար տեղեկությունների ընդունում ու մշակում» գործառնությունը (P.CC.08.OPR.006) կատարելու դեպքում կատարվում է «Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրի թարմացված տեղեկությունների հրապարակում» գործառնությունը (P.CC.08.OPR.008), որի կատարման արդյունքներով ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրի թարմացված տեղեկությունները հրապարակվում են Միության տեղեկատվական պորտալում:

41. «Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում պարունակվող տեղեկությունների փոփոխություն» ընթացակարգի (P.LS.08.PRC.002) կատարման արդյունքներն են՝ Հանձնաժողովի կողմից ազգային ռեեստրի տեղեկությունների մշակումը, ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում փոփոխություններ կատարելը եւ Միության տեղեկատվական պորտալում փոփոխված տեղեկությունների հրապարակումը:

42. «Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում ներառվող տեղեկությունների փոփոխում» ընթացակարգի (P.CC.08.PRC.002) շրջանակներում կատարվող ընդհանուր գործընթացի գործառնությունների ցանկը բերված է 12-րդ աղյուսակում:

Աղյուսակ 35

«Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում ներառվող տեղեկությունների փոփոխում» ընթացակարգի (P.CC.08.PRC.002) շրջանակներում կատարվող ընդհանուր գործընթացի գործառնությունների ցանկը

Ծածկագրային նշագիրը	Անվանումը	Նկարագրությունը
1	2	3
P.CC.08.OPR.005	Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում փոփոխություններ կատարելու համար տեղեկությունների ներկայացում	բերված է սույն Կանոնների 13-րդ աղյուսակում
P.CC.08.OPR.006	Ժամանակավոր պահպանման պահեստների տիրապետողների ընդհանուր ռեեստրում փոփոխություններ կատարելու	բերված է սույն Կանոնների 14-րդ աղյուսակում

	համար տեղեկությունների ընդունում եւ մշակում	
